Մելքոն Յակոբեան Թրակիայի և Մակ-
եդոնիոյ Առաջնորդական Փոխանորդի առ-
կայութեան տարեդարձին առթիւ ։
Բաւական էնք, որ այս ժառանգաւոր
աշկերտներն մինչև ջանան իրենց
Ճեմարանական նորաձեւս ասպարէզին
մէջ՝ որ առաւել կատարելագործուին
և տարագային մէջ պատիւ ըլլալ Ս.
Աթոռոյս և Ազգին ։

— Ս. Աթոռոյս միաբան Տէր. Խա-
չէն վարդապետն ուղևորեցաւ ի Պօ-
լիս Պատրիարքարանի փոխանորդութեան
պաշտօնիւ ։

— Ս. Աթոռոյս Գահակալ Ամեն.
Պատրիարքը ծայրագոյն վարդապե-
տութեան աստիճան շնորհեց Տէր.
Միքայէլ Եպիսկոպոսին և Տէր. Տիմո-
թէոս վարդապետին ։ Տէր. Միքայէլ
Եպիսկոպոս ծայրագոյն վարդապետու-
թեան աստիճանի ընդունելութիւնը
իւր գեղեցիկ խորհրդով և Վ. Կաթո-
ղիկոսի հաճութեամբ յետաձգած էր
եպիսկոպոսանալու ժամանակ, որպէս
զի Ս. Աթոռոյս մէջ ընդունի, որ և
արդէն ընդունեց իւր փափաքանաց
համեմատ ։

— Ս. Աթոռոյս Ամեն. Գահակա-
լը իւր անտանելիութեան Տարե-
դարձի առանձնաշնորհութեան օրը Տէր.
Խաչիկ Արքեպիսկոպոսի և Տէր.
Տիմոթէոս վարդապետի Գահերէց ժա-
մանելուն ուրախական լուրն առանա-
լով խանդավառ էր բոլոր միաբանա-
կան Ուխտս յատուկ և Հանդիսաւոր
Հացկերոյթ պատրաստել տալ ի պա-
տիւ յիշեալ Հարց, երբ ողջունք Ս.
Աթոռս ժամանեն ։ Այս խորհրդական,
խնջոյքը կատարուեցաւ ամսոյս 24ին,
ուր հրաւիրուած էին քաղաքիս նշա-
նաւոր ազգայինքը և Սարկաւ. Գեր.
Եպիսկոպոսը ։ Հանդէսի մէջ կարդա-
ցուեցան քանի մի ճառեր և երգուե-
ցան ազգային երգեր ։ Ի վերջոյ Ամեն.
Պատրիարքը սրտաշարժ քաղցրախօսու-
թեամբ կնքեց հանդէսը՝ հայցելով
Աստուածային օժանդակութիւնը և
Նախախնամական ամենակեցոյց բարիք-
ները մեր հաւատոյն Ազգի և եկեղեցւոյ,
մեր հայրենի եկեղեցականի և աշխար-
հական պաշտօնատարաց և առ հասա-
րակ բոլոր հայկազուն ժողովրդեան
համար ։

— Մանչէսթըր Էքզամինր անգղիական
օրագրի 998 թուոյն մէջ յարձակողա-
կան յօդուած մը կարդացինք Միջին
դէմ ։ Հայոց Ազգին սպասարկութիւնք
արդէն առաջնման հասած ըլլալով
ուրիշ անգամի կը թողունք մեր պատ-
ասխ հատուցումը ։ Նաւական է
միայն որ առ այժմ համառօտիւ կ'ա-
պահովցուցանենք յիշեալ Յօդուածագիրը
և կը խոստանանք փող թէ անազնիւ
անշուշտ պարտականք ըլլայ ։

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Նոր Ճաշակ գրականութեան կամ
առ ձեռն Քերականութիւն ։

Տրամաբանութիւն առ ձեռն ։

Համառօտ Քերականութիւն
Գաղղիարէն — Հայերէն ։

Մատթէոս Ուռհայեցի ։

Բանախօսութիւնք աղջկանց ։

Բանաստեղծութիւնք Ն—ը Ն. Մ...

Ցանկացողք կարող են գնել այս
գրեանքը, ինչպէս Աթոռէս՝ նոյնպէս
և իւր գործակալներէն զանազան քա-
ղաքաց մէջ, մանաւանդ Ս. Գանու-
Փօլսոյ գրատունէն, որ Գալաթիոյ Ս.
Լուսաւորիչ եկեղեցւոյն քով է ։

digitised by A.R.A.R.@